



## Հ. ԹՈՒՐՃՅԱՆ

### ՀԱԲԵՇ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ Ս. ԵՎԼՍԱԹԵՈՍԸ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

**Ա**բեշները պատմական ասպարեզ են նեկել շատ հին ժամանակակից, բայց մենք չունենք ոչ այդ ժաղկվրդի հնագույն շրջանի ստույդ պատմությունը և ոչ էլ ճիշտ պատկերացում նրա անցած ուղու մասին։ Սակայն նրա պատմական անցյալի մասին եղած կցկտուր տեղեկությունները Հարեշը տառնի պատմությամբ հնատարքը վողներին րերում են այն եղակացության, որ այդ երկիրը հնաւալոր անցյալում սերտորեն կապված է եղել իր ժամանակի քաղաքակիրթ երկրների՝ Երջանիկ Սրբայի, Եղապոսի և ապա Հունա-Հոռոմեական աշխարհի ու կուտարայի հետ։ Նա անհամեմատ ավելի բարձր կուլտուրա է ունեցել աֆրիկյան իր շրջապատ համեմատությամբ։

Կարմիր ծովը, չնայած նավարկության համար իր խիստ անրարինապատ պայմաններին, դեռ շատ հին զարերում առևտրական աշխույժ կապերի կամուրջ է հանդիսացել Ձեղիստանի, Պարսից ծոցի, Եփիսոսի, ասպանակ Հոթա-Հոռոմեական աշխարհի միջև։ Այդ ծովային ճանապարհ նշանակություն այնքան մեծ է եղել հին աշխարհի առևտրական հարաբերությունների մեջ, որ դեռ փարավունների ժամանակ Կարմիր ծովն արդեն ջրանցքով միացվել էր նեղոս գետի հետ։ Պալմիրանիների ժամանակ այդ ջրանցքը վերստին նորոգվեց և Կարմիր ծովը նեղոսի վրայով կապվեց Միջերկրական ծովի հետ ու նորից դարձավ բանուկ ճանապարհ։

Սակայն այդ բանուկ ճանապարհը բնական մեծ անհարժարություններ ուներ։ Մովք էր վտանգավոր խութերով, իսկ խութերց ավելի վտանգավոր էին անտանելի եղանակը և ստորքը յարժում ավազը, որը հաճախ փակում էր նավերի ճանապարհը։ Այս վտանգների դեմ պայքարելու համար փարավունները հանգրվաններ էին կառուցում ծովի երկու ափերին։ Այդ հանգրվաններն ապա-

հով դարձնելով նավարկությունը միաժամանակ կապ էին պահպանում իրենց շոշապատի ցամաքի հետ, գառնում նրանց համար կուլտուրական նպատասխն նայող պատուանների ժամանակի ընթացքում հանգրվանները դարձան բաղաքների, շարժման մեջ դրին հարկան երկրների բնակիչներին, նրանց համախմբեցին իրենց շուրջը և վերածվեցին առանձին թագավորությունների։ Այսպիսով Կարմիր ծովի արևելյան ափին ստեղծվեցին Մինայի, Սարայի, Քաթարանի և Հաղպատակի իրավունք ափին՝ Նորիայի, Մերուիի (Նարաթ) և Աքսումի թագավորությունները։ Հույնները և Հատմացեցինները շարունակեցին իրենց կապն այդ հանգրվաններավորությունների հետ, սրանց թագավորներն իրենք էին զեկավարում երկրի առևտուրը շուկա հանելով համեմունքներ, փղոսկր, սոկի, խունկ, զմուռս, թանձագին փայտ, վայրի զաղաններ, մորթիններ և խափշիկ ասրաւելներ։ Նրանք առևտրական կապ էին պահպանում ոչ միայն նպիպոսի, այլև փրար հետ և դիզում հակաբական հարստություն։ Խստվածաշանչը պատմում է Սարայի թագուհու մասին, որը թանձագին նվիրներ էր ավել ջրերից Սողոմոնի իմաստուն թագավորին։ Այդ թագավորությունները, սկսած մեր թվականությունից հազար (թերեւս ավելի) տարիներ առաջ մինչև իսլամի երեսն գալը, ժամանակ առ ժամանակ բարձրանում և բնկնում էին զերիշխանությունը զիշելով մերթ մեկին, մերթ մյուսին։

Կարմիր ծովի հարավ-արևելմայան ափին աճեց ու զարգացավ հանգրվան-քաղաքներից մեկը՝ Ալուփսը։ Սակայն նրան շվեճակվեց իր հարակից երկրի իշխանությունը կհնարունացնել իր ձևոքում։ Այդ բանի համար ավելի զորեղ մրցակից հանդիսացավ հարեսն Աքսում քաղաքը, որը նավահանգիստ չէր, բայց ցամաքային ճանապարհների կարեսը հանգույց էր։ Աքսումի վրայով էր անցնում

Սուվան առաջ քարտվանալին ճանապարհը Արտումը սորդկավաճառապյան կենարան էր և խափշիմեր էր Հայթայինում արտաքին շուկային։ Մեր թվականության առաջին գարում Արտումը զամուստ է խոշոր քաղաք, որի բնակչության մեջ կային ոչ սակավաթիվ Հույնի ներուն այդ կողմերն արշավախումը է ուղարկում նեղոսի ակունքներն ուսումնասիրերու համար, խոհ Հույները շարունակում են իրենց սերտ կազմը այդ քաղաքի հետ։

Կարմիր ծովի արեւելյան ու արեմայն տիկիրի թագավորությունների մեջ Արտումն առանձնահատում տեղ է զրավում հատկապիս մեր թվականության չորրորդ դարում, երբ Հույնի առողջականությունները Այդ երկու թագավորները կարողանաւում են իրենց հնաբարկել հարեւան շատ երկրների և սահեցել հզոր պետականությունների համար մնացել են երեք լեզվով՝ Հունարեն, սարացիրեն, գեեցերեն զրված արձանագրությունների։ Պարսից Գաւրենի նման նա ցանկանաւում էր, որ իր քաղաքն այցելերդ ամեն ազդի ներկայացաւցից կարողանար իր լեզվով կարդալ մեծ թագավորի տարած հաղթանակների մասին։

Արտումի բարձր կուտուրայի մասին Անվայում ո՞չ միայն մեզ հասած հուշարձանները, որոնք հարանարի իրեցիք 19-րդ դարի ընթացքում կատարված պեղումների շնորհիվ, այլև այն, որ երկիրը ստեղծել էր իր սեփական այրութեանը, փոք սեփական ազգային ավանդությունները և, ի տարրերություն Կարմիր ծովի ավազանի մյուս երկրների, ընդունել էր քիսուունեությունը։ Այս նոր կրոնի ընդունելը, անտարակույս, կուլտուրական մեծ հեղաշրջում էր երկրում։ Սկսվում է նոր կյանքի Հրապարակ և գայիս կրօնական մեծ գործիչներ, որոնք մարտում Անտարածելու համար նոր կրոնը։ Համար նոր կրոնը։ Համար պայտքար է սկսվում Նեթանոսության և նրա բարքի դեմ։ Հարեւական վարքիր մեջ Հույնատկություն է պահպանվել «արտումյան ինն երանելիներ»-ի մասին, որոնք իրենց ամբողջ կյանքը նվիրում են նոր կրոնի ու նրա սամանի տարածմանը և հաղթանակին։

Քիսուունեության հաղթանակը (318 թ.) իր զրոցն է դնում նաև արտումյան ազդյանին ավանդությունների վրա, որոնք վերամշակվում են Աստվածաշնչի ավանդությունների տեսանկյունով։ Մտեղծում է մարդկանական գրականություն, որը մեծապես նպաստում է զեեղ լեզվի զարգացմանը։ Քիսուունեության ընդունումը երկիրը քաղաքական ավելի սերտ կապի մեջ է դնում Բյուզանդիայի հետ։ Պատմական իրադրության է, որ Հուստինիանու կայսրն իր նավատորմն է տղարկում Կարմիր ծով և նպաստում, որ Արտումի թա-

գավորները նվաճեն ծովի արարական ափը, որի ժողովարդներն արդեն սկսել են անհանդապիթյան պատճառներու կայսրության հարավային սահմաններին։ Այսպիս, 525 թվականին Արտումի Կարեր թագավորը մեծ զորք է հավաքում և բրազանդացիների օգոստյամբ անցնամում է ծովի արեւելյան կողմը ու նվաճում նրա արարական ափերը։ Արտումյան տիկիր արարական թիվունը արարական թիվունը առաջարկուում է 72 տարի, մինչև 598 թվականը, երբ ապաստիր արարական հարցադրությունը է իրենց կողից առաջարկուում է իրենց կողից արարական ափերը։

Արարական արշավանդները վճռական ազգակցություն են գործում Հարեւատանի պատճառական հակատապիթ վրա։ Անգուսությունը հարակույց գուրու խորացող արարական համար հարեւական անմատչելի լինենքը գրամից էին նրանք իրենց հայացքն ուղղել Երևանի Բյուզանդիայի հարուստ ու բարերեր ծայրերկրներին՝ Սիրիային, Պաղեստինին, Եգիպտոսին, իսկ Արևելյան՝ Միջադետրին, որը պատկանում էր Սասանյան պարսկիներին։ Արարական միայն մի փոքր բանակ անցավ Կարմիր ծովը և հիմնահատակ կործանեց Աղուպին նավահանգիստը։ Արտումի Արձակ թագավորն անմիջապես ընդունեց իսլամի կրամագիրը և գրամագիրը հիմնեց Ասկան գա երկրի համար փրկություն չեղավ։

Երբ արաբները աեր գարձան բարերեր ու կուլտուրական երկրների և անուշազրության մատնեցին Արտումը, վիրշինիս թագավորը ները հարկ շվացիքն հետեւելու Արմազի օրինակին և նորից վիրագասեցին քրիստոնեական կրօնը։ Այդ շրջանում ահեղի ունեցավ մի երեւլիթ, որը թիւն շվանինց, բայց հետաձեց Արտումի անկումը։ Արարական նորանվաճ երկրներից փախած քրիստոնյաներն ապաստանեցին Արտումի թագավորության մեջ։ Կարմիր ծովի արեւելյան ափից եկան մուսուլմանական շարժումից դեռ շատ առաջ քրիստոնեության ընդունած կուլտուրապես բարձր արարները։ Դա թարմ ուժերի արհեստական ներարկում հանդիսացավ երկրի կյանքում։ Գեեղ լեզվուն, անգամ կրոնական գրականության մեջ, որոշ ժամանակ տեղի տվեց արաբերենին, բայց շուտում նորեկիները սովորեցին զեեղերենը, որն ազգակից էր արաբերենին և զարկ տվին թարգմանական գրականության զարգացմանը։ Այնուշետե Սիրիա, Պաղեստին և ապա եղիպտոս անցան հայ վանականներ, որոնց համար կտրված էր Հայրենիք վերադառնալու ուղին արարներն իրենց աշխարհականական նվաճումներն սկսել էին Սիրիա-Լիբանանից, ապա իշել էին Պաղեստին և հետո միայն անցել եղիպ-

տոս): Անասելի դժվարություններով, ամենայն հավանականությամբ թիրել—Սուտան—Մերոյի (Նարագ) ցամաքային ճանապարհով Հարեշտանա ապավիճանած հայ վանականները հաստատվեցին Արտուրի թագավորության սահմաններում, ներկայիս Դեսին քաղաքի ընտ, հարեշտական խորնիկաններում «Հայք» անունով հիշտակված կղզում և կառուցեցին իրենց վանքը<sup>1</sup>, որը 7-րդ դարի կեսերից կանգուն էր մինչև 1527 թվականը՝ Աշմեղ-Մուհամենդ Ղուանի ավերիչ արշավանքները: Հայք վանքն իր սեփական օրինակելի զորով կուտուրական և առաջարական ծավալուն գործունեությամբ դարեր շարունակ աշքի ընկնող և դաստիարակիչ պղղիո է եղել Հարեշտանի պատմության մեջ<sup>2</sup>: Բայց այս ամենը որոշ թարմություն մատնելով հանդերձ հարեշտական կյանքում, վերջ ի վերջո, վճռական նշանակություն չունեցավ երկրի մակատագրի համար, որովհետեւ արարանքը, գուափեր նեփատուսը, Պաղեստինը և Սիրիան, Երսումը կտժել էին արտաքին աշխարհի հետ ունեցած շփումից և մեկուսացրել նրան: Երկիրը չկարողացավ պատշաճ ձեռվ օգոստի թարմ ուժերի ներհոսանքից և նրանց աստհանարար իր մակարդակին իշխցնելով, հավասարվեց իր ներանոսական շրջապատին, որից մի ժամանակ աշնքան բարձր էր կանդնած:

1. Ռուս ականավոր հարեշտական ակադեմիկոս Բ. Տուրակի ուսուցիչ ուսու առաջին հարեշտական պրոֆ. Վ. Վ. Բոլուպով («Христианское чтение», 1897, 1, 195—196, որում. 13) Հայք կղզում կառուցված հայկական վանքը կոչում է Ս. Ստեփանոսի անունով:

2. Արարական արշավանքներից անմիշտական հնատ Մոփաց աշխարհի տեր Համազասպ Կամսարական Պահապնի իշխանի պատվերով Երուսաղեմ գնացած Աստածա վարդապետ Գաղափարացին իր զեկուցագրի մեջ, որ կոչվում է Ելամ վանորեից, որ ի Ս. բազարն յերսուաղէմ, մեկ առ մեկ թվարկելով Երուսաղեմի և նրա շրջակայի 70 հայկական վանքերը, գրում է. «Զի հրաման թագաւորի խստանայր ի վերայ սրբոյ քաղաքի հայրապետացն, զի մի՛ բնակեսցեն անդր ի հայոց կրօնաւորաց և Յակոբիկ ասորի կամ յեփիդացուցն, այլ միայն որբ ուզ ունին զաւատս թագաւորին և զՅօրենաղի սահմանակրութիւններ և գրեաց կաթողիկոսն հայոց թէ վասն հաւատոյ մասին մի՛ հնազանգէթ գոցա, այլ թողէ՛ք և արտարոյ զնացէ՛ք ի քաղաքի այտի և բաղումը Բողին զմենաստանս իրեանց և զինչն և ի բաց գնացին և այլը բնակեցան ի կեսարիա (Հայոթել, ինչպես հաճախ նկատում ենք մեր պատմության մեջ, Կապագովկիայի կեսարիայի հետ) և այլը շոգան յեփիպատս, և բաղումը ի տեղուցին իրեանց ոչ զնացին, այլ համբերեցին գանից և աւարառութեանց և նեղութեանց ի հայրապետացն Երուսաղէմի, մինչև տիրեցին տաճիկը աշխարհին Պաղեստինոյ և Երուսաղէմի, և այնուհետեւ ոչ համար-

Արտաքին առևտուրը դադարեց, իսկ ներքին առևտուրը խիստ սահմանափակվեց: Մովամերը Տիգրես մարզը և նրա կենտրոն Աբում քաղաքը կորցրին իրենց վաղեմի տնտեսական ու քաղաքական կենտրոնածից ուժն ու նշանակությունը և երկրի քաղաքական կյանքում առաջնությունը զիշեցին լեռնաշխարհի հշանաներին, որոնք զարդեր շարունակ տնօրինեցին երկրի ճակատագիրը: Սակայն Հարեշտանի պատմության մեջ այնքան մեծ ու վճռական է եղել Արտուր քաղաքի նշանակությունը, իսկ նրա թողած կուտուրական ժառանգությունն այնքան նվիրական, որ մինչև այժմ էլ Արտուրը սըրբական քաղաքի համբավ արքավ ունի հարեշտակի մեջ:

Հարեշտակի ազգային ավանդության համաձայն («Արքաների փառքը» և ապա «Արքաների հարստությունը» մատյանները) Աստվածաշնչում հիշտակված Սարայի Մաքեդա թագուհին այցելելով Հրեից Սողոմոնի իմաստուն թագավորին նրանից ունենում է Մենելիք անունով զավակ, որը գառնում է Արտուրի առաջնությունը թագավորը և այսպէս կոչված Սողոմոնյան հարստության հիմնադիրը: Այդ հարստությունն իրը թիւ առնում է մինչև 950 թվականը: Այնուհետեւ սկսվում է հարեշտակի պատմության խառն շրջանը: Խնձուս նկատեցինք, Արտուրը

ծակեցան բոհականել զոր հայրապետն, զի քայլացան ի ձեռաց Խոմայէլացուցն պատրիարքունք և զերեցան, և հանգիստ տանի Հայք և Ասորեից: Իսկ յանոյ ի ծանրութենէ հարկացն նեղեցան և յաւերանացն երկրին Հայոց, զի ոչ բերէին զմուստ զեղարեաց, զոր պարզեալ էին թագաւորը և իշխանք հայոց, և նոցա ոչ կարացեալ համբերել՝ թողին զաղիս իրեանց:

«Են զարձեալ ելին ինքնանքն, հայ վանականը, ի ծանրութենէ հարկաց տանկացն նողուրել կամմելով, և այլ իրեանց վաներն որ ընդ ձեռամբ էր ընդ պարսպօք քաղաքին՝ կանանց վանքեր արարին և սարկաւունի հարգեցին, զի անհարկ լիցին և ազատ որպէս և զայլ կանանց վաներն եւ ինքնանքն զվահական արտարարուոյ քաղաքին ելին յայլ տեղիս, և փոխեալ զանուանս՝ գաւառաց և պատացն ազգացն անուանեցին անուանս, թիրես ի նոցանէ զացնն օգնութիւն և ողորմութիւն:

«Արդ բազումը յնդիպատու և յնդիքսանդրիս և ի Թերայիի և ի յանոն Սինէկան կային մենաստանը հայոց, նա և ի սուրբ լեռն Բարօր, և յեզր ծովուն Տիրեայ և յայլ սահմանս Պաղեստինոյ, զոր յոլով իմովին իսկ աչօք տեսնալ, զամս բազումս կային. լինելով յաշխարհին յայնմիկ, և ամենայն աստուածաշուն և հոգեպատում պատուիարանը անպակաս գոյր ի Հայկան լնզու, յամենայն մենաստանու Երուսաղէմի և որ նովաւ շուրջ զերուսաղէմաւ (էջ 10—12):

կորցրել էր իր անտեսական ու քաղաքական նշանակությամբ։ Հարեցատանի պատմության ծանրության կենտրոնը փոխադրվել էր լւսառշաբաթը։ Անգամ Եկեղեցու պետք՝ արունան, լրիսվ սրբազն քաղաքը, փոխարունական գրվել էր լինաշխարհի քաղաքներից մեկը՝ Գոնդորը։

Այդ խառն շրջանում, 10-րդ դարի կեսերին, հուգայացավան քարշակներին հաջողվում է գրավել Արտօն քաղաքը, կարծանել այն և կոտրել Սոլյունյան Հարստության տան անդամներին։ Բայս ավանդության նրանցից միայն մեկին է հաջողվում փախչել նու և այստեղ շարունակել իր տաճքը։ Ֆալաշաների իշխանությունը տեսամ է 70 տարի, որից հետո կասառ նահանգի տերերը՝ զարգանեներ, գրավում են Արտօնը և իրենց վերասունակությամբ Հարեցատանի նեղեցտի տիտանուր։ Այս զարգեցների տնից է բրիտանյա թագավոր բարեկալու Լալիրալան, որը գատված է Հարեցական սրբերի շարքը։

Հայտ ավանդության, Լալիրալան, դեռ թագավոր շղարձած, սիրում էր զնալ անապատները, զնին և աղոթեր Թագավոր դառնալով նա շատ բարեկառ փանքեր է կանգնեցնում, որոնց կառուցման համար յերում է Եղիպատոսից փախած սպատակամորթ վարպետներ։ Լալիրալան երկրի լավագույն հողերը նվիրում է այդ վանքերին ու առնասարակ Հարեցական Եկեղեցուն, և մեծապես նպաստում Եկեղեցու ուժեղացմանը։ Նրա քաղաքականության հակառակորդները շատ են պայքարում Լալիրալայի բրիտանացան դործունեության դիմ և, վերջ ի վերջո, թունավորելով մեղոնում են նրան։ Լալիրալայի թագավորությունը, թեև ստույգ պարզված չեն նրա զա՞՞ բարձրանալու և մանվան թվականները, զուգաղիսում է հաշակաց արշավանքների խառն շրջանին։

Լալիրալան Հարեցական այն նշանավոր թագավորն էր, որը փորձում էր վերջ տալ ավատական իշխանների անող կենտրոնախույս, չլատիչ քաղաքականությանը և սերակապ հաստատել Եկեղեցու հետ, ուժեղացնել այդ կապը, որովհետև միակ կենսունակ ուժը, որի իշխանությունը տարածվում էր բռվանդակ Հարեցատանի վրա, Եկեղեցին էր։ Նրա այս քաղաքականությունը հաղթանակ տարավ 1268 թվականին, երբ Հարեցական նշանավոր կրոնական գործիչ Թակլա-Հայմանոթի ջանքերով։ Հարեցական Եկեղեցու աշակցությամբ, հաջողվեց զա՞՞ բարձրացնել նորի բրիտանյա իշխան Եկունո-Ամլակին, որը Եկեղեցու թեկնածուն էր և Եկեղեցու վերարերժամբ շարունակեց Լալիրալայի քաղաքականությունը։

Իկունո-Ամլակին Ե՛լ ամիելի ուժեղացրեց Եկեղեցին, նրան նվիրելով նորանոր հարուստ հոգին Եկեղեցին իր հերթին Իկունո-Ամլակին հոչակեց Սոլյունյան տաճմի շառավիր և նրանով սկսված զինասափան նվիրագործեց որպես Սոլյունյան զինասափանը։

Բնորոշ է, որ Հարեցական Եկեղեցուն նվիրված բրիտանյա զինասափայի հազմանակը տեսի ունեցագի խաշակրաց արշավանբերի դարաշշամաւմ։

Թեև բնորոշված է տակ, որ Հարեցատանը բրիտանին մեկնացացված էր արտաքին աշխարհից, որ մասությանական նվիրատոր նրան կարել էր Մերձավար Արմելիից ու Եփրամյացից, բայց նորից համաշխարհային պատմության շրջագարձային իրադարձությունները որոշ արձագանք էին դանում այդ երկրում։

Իկունո-Ամլակի հիմնավրած նոր բրիտանական Սոլյունյան զինասափան իր գարության համար պայտքար է սկսում հեթանոսական և մասությանական շրջապատի գմբ։

Սոլյունյան հարստության ներկայացուցիչներին շահողվեց սունդել կենտրոնաձիգ ուժեղություն։ Արսումը մնում էր որպես սրբազն, նվիրական քաղաք, այնակ էր զոնվում Հարեցների ամենափառավոր եկեղեցին։ Սակայն ո՞շ թագավորը և ո՞չ կրօնապետը չեին նստում այստեղ։ Հարեշ թագավորների համար դարենք շարունակ տրագիցիոն օրենք դարձավ լեռնաշխարհուում աստանդական կյանք վարելը և անձատշելի ու անառիկ բնական բերդերում ժամանակ առ ժամանակ հանգատանալը։ Նրանք թագավոր զառնալուց հետո, սրբագործված սովորությամբ, լեռներից իջնում էին Արտօն քաղաքը, անստեղ մայր տաճարում օծվում նեղուս-նեղեցտի և այդ տիտղոսով (հաճախ միայն տիտղոսով) զինված, նորից անցնում լեռները։ Լեռներն ամելի ապահով էին դաշտավայրային Արտօնից։

Հարեցատանում արտաքին աշխարհի հետ կապը պահպանված էր զինավորապես Եկեղեցու միջոցով։ Հարեցական բրիտաննեական Եկեղեցին ինքնուրույն կազմակերպություն չուներ։ Թեև ըստ ավանդության Հարեցական դարձր կապված է նավարեկության հետևանքով։ Հարեցատան Ենկած հույն բարեկալու վաճառականի՝ Ֆրումենտիոսի անվան հետ (318 թ.), թեև Հարեցատանում բրիտաննեության տարածման գործում վճռական դեր էն խաղացել Արտօնի ինները, որոնք ըստ ավանդության հետևանքով կապված է նավարեկության հետևանքով։ Հարեցատան Եկեղեցու աշխարհի ջանքերով, Հարեցական Եկեղեցու աշխարհությամբ, հաջողվեց զա՞՞ բարձրացնել նորի բրիտանյա իշխան Եկունո-Ամլակին, որը Եկեղեցու թեկնածուն էր և Եկեղեցու վերարերժամբ շարունակեց Լալիրալայի քաղաքականությունը։

սի Պատիական Եկեղեցու հետ, և իր կրոնապետը (արքունա) դրամական որոշ պարզի տալով ստացել է Պատիների պատրիարքից: Սմէն անգամ, երբ վախճանվում էր արքունան, Հարեշական Նեղուս-Նեղշատին պատվիրակություն էր ուղարկում Եղիպատոս՝ Ալեքսանդրիա և Պատիների կրոնապետը նոր արքունա էր ուղարկում Հարեշատան: Արքունաները միշտ եղել են Պատի և Հաճախ շնուրացել աեղական լիգուն (ավելի ճիշտ՝ լեզուները. Հարեշատանում խոսակցական լեզուները եղել են ամշարերներ, տիգրինիա և տիգրե ցեղակից լեզուները և այն, իսկ կրոնական գրականության և Եկեղեցու լեզուն եղել է գեեղերենը, որ թարգմանաբար նշանակում է բերովի, ներմուծված լեզու և ազգակից է Հարավային արարերենին): Նշանակովի, ուղարկված Պատի արքունան ունենում էր իր տեղապահը՝ չեկի, որն արդին Հարեշ էր և ընարդում էր Նեղուս-Նեղշատիի կողմեց:

Այսպիսով, Հարեշական Եկեղեցին կազմակերպեն կապված էր Ալեքսանդրիայի պատրիարքական աթոռի հետ, իսկ տեղական Հայկական Հայր վանքի կուլտուրական մեծ գործունեության շնորհիվ (բավական է ասել, որ ակադեմիկոս Տուրակի վկայությամբ Հայկական վանքի Հայրերից Գևորգն է գրել «Տիրամոր փառարանությունը», որ Համարվում է գեղեց լեզվի ամենափայլուն գոճարը. տե՛ս ակադ. Բ. Ա. Տուրակ, «Էֆիոպէն բարձրաց առաջնական ակադեմիական ակադեմիա» 1918), ինչպես նաև զեպի երուսաղեմ կատարիով ովաստագնացությունների հետեւլանքով (իսկ Հարեշ աշխարհիկ և հոգևորական ովաստագնորները որպես մհաքնակներ Հյուրնեկալվում էին միայն Երուսաղեմի Հայկական Ս. Հակոբա վանքում), Հարեշ Եկեղեցին առնչվում էր Հայոց Եկեղեցու հետ, անվերապահորներն ընդունելով վերջինիս կարեսը զերը արեկելան միարնակ եկեղեցիների մեջ:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն, Խաչակրաց արշավանքների դարաշրջանում, աշխուժանում են Հարեշների արտաքին Հարաբերությունները քիչստոնեական մյուս երկրների հետ: Տեղեկություններ կան, որ Հարեշատան են զալիս պարտված առանձին խաչակրներ: Այդ ժամանակաշրջանում Կիլիկյան Հայկական թագավորության մեջ որպես սուրճանդակ ծառայում են Հարեշ պիտիրականներ. Եղիպատում քրդական էուրյան դինաստիայի (Սալահ-Էղ-Դինի) Հաղթանակից հետո (1169 թ.) Հարեշատան են պատվինում մինչ այդ Եղիպատում բարձր դիբքի Հասած Հայեր:

Խաչակրաց արշավանքների վերջին շրջանում Կիլիկյան Հեթում թագավորի մասին Ալիշանը գրում է.

«Ենագոյն յարաբերութիւն Հայոց ընդ երովացցոց գուշակի ի թելաղորութենէ խորատես քաղաքագետի և գրի Հեթույտեան Կոռիկոսի՝ առ քահանայապետն Հրովմայ զի գրեսցէ առ թագաւորն եթովապացոց յարգոր ի խաչակրութեան և առաքեցէ ըստ թղթեան առ թագաւորն Հայոց, զի տվյալ նորա թարգմանել յեթովացից լեզու՝ տարցէ առ թագաւոր նոցին» («Արտական», էջ 471):



Հարեշ կրոնական գործիչների մեջ, որոնց Հարեշ Եկեղեցին դասել է սրբերի շարքը, առանձնահատուկ տեղ են գրավում Թակլա-Հայմանոթը և Եկստաթիոսը: 17-րդ դարի երկրորդ կեսին Հարեշատան այցելած Հովհաննես արքեպիսկոպոս Աղթամարցին առաջինին անվանում է Թիմլմանոս և Հրեական ծագում է վերագրում նրան, իսկ երկրորդին պարզապես անվանում է Թագեսս, և «յազգին Հայոց առաջ առաջ եկեղեց»:

Թակլա-Հայմանոթը Հարեշ սուրբերի մեջ գրավում է առաջին տեղը, որպես Աքսումի ինն երանելիների՝ քիչստոնեության տարածողների գործի շարունակողը, որովհետեւ նա կարուցացավ 13-րդ դարում քիչստոնեությունը տարածել Հարավի Հեթանոսական Շուա հաշանգում: այդ նրա մեծագույն գործն էր, և այդ պատճառով նրան մեծարում է Հարեշ Եկեղեցին և ժողովուրդը: Մյուս կողմից նրա օգնությանը և ջանքերին է վերագրում Եկունո-Ամակի Սողոմոնյան քիչստոնեական Հարստության վերականգնումը երկրում: Ենթադրվում է, որ Թակլա-Հայմանոթն է Սողոմոնյան Հարստության լեզենդի Հնարուղը: Նրա հիմնադրած Դարրակի իրանոսի վանքը և Լիքանոսյան միարանությունը խոշորագույնն է եղել երկրում: Բայց Թակլա-Հայմանոթի կյանքն ու գործունեությունը ավելի մշուշապատ է, որովհետեւ նրա մասին գրված վարքը շատ է մեղանչում ճշմարտության դեմ և պարունակում է Հրաշագործություններ:

Թակլա-Հայմանոթից հետո Հարեշ Եկեղեց կողմից ճանաշված և Հարեշ սրբերի շարքը գալած երկրորդ մեծ կրոնական գործիքը Մակարա-Եկպիհեն է, կրոնական անունով Եկստաթիոսը, որի գործունեությունն այնքան սերտորին կապված է Հայ Եկեղեցու հետ, որ նրան Հաճախ հայ են անվանել ինչպես նրա կենդանության օրոք, այնպես էլ հետագայում:

Մակարա-էկզիեն հավանաբար ծնվել է 13-րդ դարի վերջում, Տիգրե նահանգում, Հարեցստանի առավել զարդացած և հնագույն կուպուրա ունեցող երկրամասում, ազնվականի բնանիբում, նրա մարզպայրը հոգիորական էր, հայտնի ուսումնական վանահայր Գանձիելը, որին փոքր հասկեց աշակերտել է եվստամենոսը Իր ծնողների ցանկության հակառակ իրեն ամրապնդվին սփրելով կրոնական դարձունության, եվստամենոսը շտատով զանում է աշքի ընկնող եկեղեցական դիմք նու պայքարում է եկեղեցական լյանը ստեղծված արտավոր երեւոյթների գեմը Մինչ այդ Հարեցստանում գյոյտիյուն ունեցող կրոնական միաբանությունները հանդիսանում էին ձրիակերների ընկերակցություններ, նրանք ափակեառում էին ընդունելու միակերպ աշխատանք և շին խորշում մուրացկանությունից: Մակարա-էկզիեն առաջին ներթին պայքարում է վանականների ձրիակերության գեմը, նա իր վիճակ միաբանության համար անխախտ սկզբունք է զարձում օրվա երկու երրորդ մասն աշխատել, մեկ երրորդ մասը՝ ազոթել: Նա չի ընդունում նվիրատվություններ, նրա միաբանության անդամները զաշտային աշխատանք էին կատարում ու նորում իրենց ապրուստը: Սկսելով համար պայքար ձրիակերության դիմք ոչ միայն խոսքով, այն գործով, եվստամենոսը իրեն նպատակ էր զրել Հարեց եկեղեցին մարքել անրան տարրերից, որոնք ստվար թիվ էին կազմում նրա մեջ և վարկարեկում էին նրան:

Եվստամենոսը աներկուող պայքար է սկսում նաև բազմակնության գեմ, որը հեթանոսական ու մուսուլմանական շրջապատի ազգեցության տակ խիստ տարածվել էր հարեցների մեջ: Այդ պայքարում նա խորսություն չի գնում մարդկանց մեջ և այս հողի վրա նա մինչև անգամ զժուկում է Ամդա-Միոն թագավորի հետ, հայտած սա բրիստոնեռության զորեղ պաշտպաններից մեկն էր Բազմակնության գեմ մասն պայքարում եվստամենոսը ընհարվում է նաև իր տոհմի ավագ անդամների հետ, որոնց զուր չէր գտիս ձիուց ու թրից հրամարված այդ ազնվականի անկեղծ բրիստոնեական հավատը:

Մակարա-էկզիեն-եվստամենոսի բարենորդշական գործունեության մեջ աշքի ընկնող տեղ է զրավում շաբաթապահության համար նրա ու նրա աշակերտների մղած համար պայքարը, որը ոչ այնքան պատճառաբանված ու հիմնավորված պահանջ էր նրա կողմից, որբան պայքարի տրամարանությամբ թելադրված կողմնորոշիչ ու սահմանա-

գատող մոմենտ՝ նրա ուսմանքի մեջ եվստամենոսի ուսմանքի մեջ հիմնականը նրա մողեսանդ պայքարն էր երկրում իշխան Պարս-Բիգանուսյան (Թակրա-Հայմանութիւնաւութիւնների) գարսցի գեմը: Հարեցական առաջին սուրբ Թակրա-Հայմանութիւնը և նրա հիմնագրած Փարարա-Բիգանուսյան զպրոցը հիմնական ուշադրությունը կենարանացը էր ին հեթանոսներին գարձի բրեկու համար մրցված պայքարի վրա: Նրանք չէին խորանում զավանաբանական նրբամիտների մեջ, չին մարտառում բրիստոնեական ուսմանը անազարաւթյան համար: Եվստամենոսը այդ տեսակետում էր ին հաշակրած արշավանդների շրջանում արեւելյան բրիստոնեական նկեղեցիների մեջ այս կամ այն կերպ հարցուցած ունփուսական շարժումը հակասում էր նրա մոնովիկիտյան (միաբնակ) բժրունումներին և նրա նկեղեցու միաձույլ անկախությանը: Նրան չէր բազմարարում սոսկ բրիստոնյան ուրցորչումը նաև նրա հիմնված Գարրա-Բիգանուսյան զպրոցը պայքարում էր նրա հանուն կրոնի անաղարաւթյան, զավանանքի միշտ բրերանման ու մեկնաբանման, միաբնակության համար:

Հարեցական կրոնական բոլոր գործիչների մեջ, սկսած Աբսումի շրջանի ինն երանելիներից մինչև Թակրա-Հայմանութիւնը ու նրա աշակերտները, մինչև բարեկազար թագավորներ էակերպաւած լայիրաւան ու նակառեւառ-կապը, Աւարոն Հրաշալին և ուրիշները, ոչ ոք այնպիս չէր ցանկացել ընդլայնել իր մատակոր հորիզոնը, որբան եվստամենոսը, ոչ ոք այնպան չէր ձգտել զուրս գալ հարեցական նեղ շրջանակից, աեսնել բրիստոնեական մյուս երկրները և շփկել նրանց հետ, որքան եվստամենոսը:

Հարեցական բոլոր կրոնական գործիչների մեջ եվստամենոսը առանձնահատուկ տեղ է զրավում որպես ուսումնատենչ վանական և որոնող կրոնավոր ու իսկական բարենորոշիչ:



Եվստամենոսի գործունեության մասին զիմավոր պարբուրը նրա վարքն է, որ հասել է մեզ իրարից քիչ տարբերվող հինգ վարչականութիւնը: Վարքը պատճում է եվստամենոսի բարեկազտությունը ու կրոնասիրությունը, ազա նկարազրում է նրա ուղնորությունը դեպի երուսաղեմ, Հայաստան (իմա՞ Կիլիկիա), նրա հրաշապարձությունները և մահը Հայաստանում, և, վերջապես, նրա աշակերտների վերադարձ Հայաստանից Հարեցական: Ուշագրավ այն է, որ վարքում բանից ընդգծվում է, թե իրենց «հայրը»,

այսինքն Եվստաթեոսը, երեք անգամ է գնացել Երուսաղեմ, սակայն այդտեղ կա միայն մեկ ուղևորության նկարագրությունը: Երրուագիր կերպով կարգում ենք վարքը, պարզվում է, որ երեք անգամ Երուսաղեմ գնալու փաստի ընդգծումը լոկ նրա բարեպաշտոթյան բարձր աստիճանը ցույց տալու միտում չէ վարդապետների կողմից, այլ փրոդության արձանագրում:

Եվստաթեոսն իրոք երեք անգամ մեկնել է Երուսաղեմ և ապա Հայաստան, սակայն վարդապետները այդ ուղևորությունները տվել են վերջին ուղևորության նկարագրության մեջ:

Եվստաթեոսի գալոցը, երկար ժամանակ մինչև Զառա-Ճակորի (1434—1468 թ. թ.) բարենորոգումը, դիտվել է որպես աղանդ և հալածվել է Թակլա-Հայմանոթի Դարրաթիզանոյան գալոցի կողմից: Բնականարար Եվստաթեոսի կողմնակիցները, գրի առնելով նրա վարքը, չեխն կարող փոփոխությունների չենթարկել այն, եթե ցանկանում էին նրան ճանաչել առաջ որպես գուտ Հարեշական աղքային սուրբ, մանավանդ որ Հակառակորդները նրան շարունակ անվանում էին Հայ: Այս տեսակետից նրանք պետք է խնամքով խմբագրեին առաջին անգամ գրի առնվածք Ենրաբքեին կրօնատեին այն մասերը, որտեղ խոսվում է Հարեշստանից գուրս Եվստաթեոսի կատարած գործունեության մասին: Մյուս կողմից, խոսելով Եվստաթեոսի գործունեության մասին Հարեշստանից գուրս նրանք, անկասկած, պետք է ջանք թափեին դրսի աշխարհում նրան ներկայացնել ո՛չ թե որպես հետամնաց երկրից եկած կրոնավոր, այլ որպես կատարյալ սուրբ, խոշոր հեղինակություն:

Եվստաթեոսը, գժգո՞ւ դավանանքի անպարտության նկատմամբ Թակլա-Հայմանոթյան գալոցի ցուցարերած անտարերությունից, գժգո՞ւ կրոնագորների ձրիակերությունից և առզորված առաքելական իսկական ճշգրտություն որոնելու գաղափարներով, լրում է իր ազնվական ընտանիքը և մեկնում Ալեքսանդրիա, Երուսաղեմ, և ապա Հայաստան, ինչպես ասում է նրա աշակերտ Գարրա-Ցասուսը՝ «Հանուն առաքելական կանոնների սիրո, որովհետեւ Հայ մարդիկ ոշինչ չեին պակասեցրել առաքյալների որոշումներից» (թ. Տուրան, «Ազելեցօնայ և օբլից ագնոլոգիчесկ իշտնական իշտնականություն», էջ 177):

Եվստաթեոսն իր առաջին ուղևորությունը դեպի Ալեքսանդրիա պետք է կատարած լինի 1339 թվականից առաջ, որովհետեւ նույն կանոնների պակասեցրել առաքյալների որոշումներից» (թ. Տուրան, «Ազելեցօնայ և օբլից ագնոլոգիчесկ իշտնական իշտնականություն», էջ 177):

Վերջինի պատրիարքության տարիները Հայտնի են՝ 1327—1338 թ. թ.: Եվստաթեոսն Ալեքսանդրիայից անցնում է Երուսաղեմ, ապա Հայաստան (Կիլիկիա) և շատ վերադառնում է Հարեշստան, Կեսարիա լեռնան վրա վանք կառուցում և համախոներ հավաքում իր շուրջը: Սակայն, ինչպես պետք է նեթագրել, Հարեշական Եկեղեցին չի ճանաչում նրան, իսկ իր ազգականները նույնիսկ հալածում են նրան համարձակ քարոզների պատճառով: Եվստաթեոսը Հարեշական վածքը է լինում իր աշակերտների հետ մեկնել Հյուսիսի և ցանկանում է միաբանություն հաստատել Սիրիայի անապատում, բայց Երուսաղեմում գոտեանդվելով ետ է գանձում Հարեշստան և ծավալում իր կրոնական գործունեությունը: Ինչպես պետք է ենթագրել, այս անդամ արդեն Երուսաղեմից վերադառնուուց հետո, նա Հարեշստանում վայելում է տեղական Հայ կրոնավորների՝ Հայք վանքի պաշտպանությունը: Եվստաթեոսի սկսած շարժումը Հայկական է անվանում ո՛չ միայն հետագայում Հարեշստան այցելած Հայ արքեպիսկոպոս Հովհաննեսը, այլև Թակլա-Հայմանոթի համախոները: Եվստաթեոսի մասին տարածված Յաշշիներից մեկում պատմվում է, թե Թակլա-Հայմանոթի հետեւ վորդը Եվստաթեոսի աշակերտներին ուղղակի հարց է տալիս՝ «Եվստաթեոսն ի՞նչ գործում այս վանքի հետ, որը Հայաստանից դուրս է, որովհետեւ այս երկրը Թակլա-Հայմանոթինն է»: Ուշագրավ է, որ Եվստաթեոսի հետեւ մի հարեշ նրան ուղղակի անվանում է «Հայ քահանա»:

Եվստաթեոսի աշակերտների մեջ կազմակերպչական ընդունակություններով աշքի է ընկնում Արսադին, որին նա հանձնում է իր միաբանության զեկավարման գործը Հարեշստանում: Եվստաթեոսը տեսնելով Արսադու ընդունակությունները և միանգամայն վստահելով նրան հետագայում կարգում է իրեն հաջորդ և իր հետ վերցնելով երիտասարդ աշակերտների մի խումբ նորից մեկնում է Հյուսիս՝ Ալեքսանդրիա, Երուսաղեմ և ապա Կիլիկիա (Հայաստան): Այս վերջին ուղևորությունը նա կատարում է 1343—1344 թվականներին, Ամդա-Սիրիոն թագավորի մահվան տարին, և 14 տարի անընդհատ մնում է Կիլիկիայում, որտեղ մեռնում է 1358 թվականին ու թաղվում Հայկական եկեղեցում: Մահվան մահման իր աշակերտներին պատվիրում է անպարման վերադառնալ Հարեշստան և հազրդել այնտեղ Հայոց եկեղեցու առաքելականությունը: